

ղէ, բայց մենք լինինք քիչ պատասխանող: Փամփուշտ պէտք է դալիք օրերուն, որպէսզի ամէն մի փամփուշտ թշնամիին մի կեանք արժենայ: Այս լինի բոլորիդ նշանաբանը՝ խնայողութիւն փամփուշտի, խնայողութիւն կեանքի եւ խիստ զինուորական կարգապահութիւն:

Հ. Յ. Դ. ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ՁԻՆ. ՄԱՐՄԻՆ Կիր. 12 Ապրիլ

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Բոլոր զիրքերը իրենց զինուորներով ենթակայ են շրջանապետներու իրաւասութեան, որոնց հրահանգները եւ կարգադրութիւնները պարտաւորիչ են անխախտ:

2. Շրջանապետի պարտաւորութիւնն է հսկելու իր ստանձնած շրջանի մարտական գործառնութեան (փամփուշտի հայթայթում, պէնքերու եւ զինուորներու դասաւորում, խմբապետներ կարգել եւ վտխել, իր շրջանի մէջ օգնութիւն զրկել եւայլն): Ընդհանուր եւ կարեւոր խնդիրներու մասին (յարձակողական, նոր զիրքի գրաւում) խորհրդակցելու է Ձին. Մարմնի հետ:

3. Իւրաքանչիւր զիրք ունի իր խմբապետը, որուն ենթակուելու է զինուորը, իսկ խմբապետն ալ՝ շրջանապետին: Խմբապետը կարգադրելու է անմիջական հրահանգները՝ շրջանապետէն կամ կեղերոնէն ստացուած:

4. Ոեւէ զինուոր առանց խմբապետի թոյլտրութեան, իսկ խմբապետը առանց շրջանապետի գիտութեան բացակայելու չէ զիրքէն:

5. Բացարձակ կ'արգիլուի ինքնազլուելի փոխադրուել զիրքէ զիրք առանց կեղերոնի հրամանին:

6. Որեւէ զինուոր զիրքէն բացակայելու ատեն պէնքը հետը տանելու չէ:

7. Խմբապետները եւ զինուոր մը, առանց կեղերոնի հրամանի, ուրիշ վայր իրաւունք չունի օգնութեան դնալու, կամ փոխադարձ ուղելու: Այդ կարգադրութիւնը կեղերոնէն կը բխի:

8. Կեղերոնի հետ յարաբերելու են միայն շրջանապետները եւ գլխաւոր զիրքերու խմբապետները, զրաւոր:

9. Առանց կեղերոնի հրամանի կամ կար-

գադրութեան ոեւէ զիրք լքուելու չէ. անսաստողը ամենաձանր պատժի ենթակայ է:

10. Դիրքերու մէջ կողմնակի անձերու մուտքը կ'արգիլուի:

11. Որոշեալ լրատուներէն զատ ուրիշներ գործածելու չէ, եւ ամէն պահանջ ըլլալու է զրաւոր ստորադրութեամբ:

Հ. Յ. Դ. ՁԻՆ. ՄԱՐՄԻՆ

ՀԵՐՈՍՍԿԱՆ ԱՆՅՔԵՐ ԱՊՐԻԼ 11-17

Ապրիլ 11-ին թշնամին, կարծես յոգնած նախորդ օրուան կատաղի եւ ապարդիւն յարձակողականէն, սովորականէն բաւական ուշ սկսեց կռիւր, որ կեղերոնացուցած էր զարձեալ արեւելեան շրջանը, Շահէն աղի տան, Թէքալիֆի Հարպիլէի եւ խանի տակը: Թնդանութիւնը կը գործէին Հայկալանքէն եւ Գաթըրջի ջամիէն: Միեւնոյն ժամանակ հասկնալով որ Ալորոյի եւ վանքի տունները պարսպ են, միլիաները պարիսպը անցնելով փորձեցին Անապատայ տան պատը ձեղքելով անցնիլ ներս, զրաւելու համար Ալորոյի բնակարանը եւ այդպիսով պաշարման ենթարկելու համար Մարութեանի մեր կողուղները:

Ստեղծուած էր վտանգաւոր եւ սարսափելի դրութիւն, երբ Շտարը տեղեկութիւն ստացաւ, թէ թուրքերը մտած են Ալորոյի տան եւ պարսպի միջի աւերակները:

Դանիէլ վրդ.ի հետ կուտի վայրը հասնելով՝ հասկցանք թուրքերու վտանգաւոր մտադրութիւնը: Ուստի Շչկոյի զիրքի զինուորները տոնելով՝ անցանք զիմացի վանքի տունը: Հետադառնելով երբ մօտեցանք վերջի պատին, տեսանք, որ յիրաւի թուրքերը մէկ քառակուսի արշին տեղ անցը բացած էին եւ ներս սլիտի մտնէին: Այնտեղ սպէս մենք կրակ բացինք: Թուրքերը, որոնք միլիաներ էին, եւ մեզ ծանօթ յայտնի աւազակ զնչուներ, թողին անցքը:

Նոր զիրքային ծակեր բանալով սկսուեցաւ կռիւր: Այս անգամ թշնամին ինքը ինկաւ ծուղակին մէջ: Արդէն անոնց իրարանցման ձայնը կը լսէինք պատի յետեւէն: Մտած փլատակներու տակ՝ թշնամի զինուորները աջ ու ձախ կը կրակէին:

Իսկոյն հաղորդուեցաւ Մարութեանի զիր-